

**CITY OF LA CAÑADA FLINTRIDGE  
LA ԿԱՆԱԴԱ ՖԼԻՆԹՐԻՉԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

**ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՒՑՈՒՄ**

**ՍՈՒՅՆՈՎ ԿԱՆՈՒՑՈՒՄ ԵՆՔ**, որ երեքշաբթի, 2024թ.-ի մարտի 5-ին Ընդհանուր քաղաքային ընտրություններ են անցկացվելու City of La Cañada Flintridge քաղաքում, հետևյալ պաշտոնների համար՝

Երեք (3) անդամ  
Ժամկետով

Լրիվ դրույք՝ չորս (4) տարի

Քաղաքային խորհրդում

Այս պաշտոնների համար թեկնածուների առաջադրումը մեկնարկում է երկուշաբթի, 2023թ.-ի նոյեմբերի 13-ին, և ավարտվում է ուրբաթ, 2023թ.-ի դեկտեմբերի 8-ին, ժամը 17:00-ին:

Եթե մինչև ուրբաթ, 2023թ.-ի դեկտեմբերի 8-ը, քաղաքապետարանի գործող ծառայողի առաջադրման փաստաթղթերը չեն ներկայացվել, ապա ընտրողներն իրավունք ունեն մինչև չորեքշաբթի, 2023թ.-ի դեկտեմբերի 13-ը առաջադրել այլ թեկնածուների, բացառությամբ այն անձանց, ովքեր ընտրություններից առաջ 88-րդ օրը աշխատել են այդ գործող ծառայողի ընտրովի պաշտոնում: Այս սահմանումը կիրառելի չէ, եթե առկա չէ ընտրվելու համար իրավասու ծառայող:

Եթե առաջադրված պաշտոնի համար առկա չէ թեկնածու կամ միայն մեկ թեկնածու է առաջադրվել, ընտրովի պաշտոնում նշանակումը կարող է կատարվել Կալիֆոռնիա նահանգի Ընտրական օրենսգիրք § 10229 կետով սահմանված կարգով:

Ընտրատարածքը կգործի ժամը 7:00-ից մինչև 20:00-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար, խնդրում ենք դիմել քաղաքապետարանի քարտուղարություն հետևյալ հեռախոսահամարով՝ (818) 790-8880:

Տանյա Գարսիա, Քաղաքապետարանի քարտուղար

Ամսաթիվ՝ 2 նոյեմբերի, 2023թ  
Հրապարակվել է 2023 թվականի նոյեմբերի 2-ին  
Ad# 10802-027